ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԿԱՆԱՎՈՐ ԶԱՎԱԿԸ

(Հովհաննես Իսակովի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Լրացավ ռազմածովային ուժերի հմուտ կազմակերպիչ և ղեկավար, մեծանուն գիտնական ու հետազոտող, ծովակալ Իվան Իսակովի (Հովհաննես Իսահակյան) ծննդյան 100-ամյակը։ Հայ ժողովուրդը երախտագիտության և հպարտության մեծ զգացումով է հիշում իր ականավոր զավակին։

Իվան Ստեփանի Իսակովը ծնվել է 1894 թ. օգոստոսի 22-ին, Կարսի մարզի Հաշիքենդ գյուղում։ Նրա հայրը՝ Ստեփան Իսակովը, իր ժամանակի ակտիվ հասարակական գործիչներից է եղել։ Նա կամավոր մասնակցել է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, որից հետո երկար տարիներ որպես ճանապարհաշինարար-տեխնիկ աշխատել է Հայաստանում, Գանձակում, Բաքվում։

1906 թ., հոր մահից հետո, Իսակովների ընտանիքը փոխադրվում է Թիֆլիս, քեռու մոտ, որտեղ փոքրիկ Հովհաննեսը ընդունվում է Թիֆլիսի ռեալական դպրոցը։ 1913 թ. բարձր ցուցանիշներով ավարտում է այդ դպրոցը, մեկնում Պետերբուրգ և ընդունվում է տեխնոլոգիական ինստիտուտը։ Այստեղ ուսումնառության տարիներին մի քանի անգամ փորձում է ընդունվել ծովային կորպուս, բայց նրան մերժում են ազնվական ծագում չունենալու պատճառով։ Ինստիտուտում սովորելը, սակայն, երկար չի տևում։ Շուտով Իսակովը զորակոչվում է զինվորական ծառայության և ցանկություն հայտնում ծառայել ռազմածովային նավատորմում։ Նրա երազանքը իրականանում է, նա ընդունվում է Պետերբուրգի «Նավատորմի յունկեր» դպրոցը, ապա 1914—1917 թթ. սովորում Գարդեմարինյան դասընթացներում։ Սովորելու տարիներին Իսակովը մասնակցում է հեռավորարևելյան մի քանի ծովային արշավանքների, որտեղ աչքի է ընկնում իր խիզախությամբ և տո-

կունությամբ։ 1917 թ. ստանալով միջմանի կոչում ծառայության է անցնում Վլադիվոստոկում՝ «Վլաստնի» ռազմական ականակրի վրա։ Այստեղ կոփվեցին ապագա ծովակալի բնավորության գծերն ու կամքը, ձևավորվեցին ունակությունները։ Նա մեծ փորձ ձեռք բերեց բարդ ու անելանելի թվացող իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու, նպատակասլաց գործունեություն մղելու և այլ հարցերում։

Որոշ ժամանակ անց Իսակովը փոխադրվում է Բալթյան նավատորմ, գլխավորում «Իզյասլավ» նավի կառուցման աշխատանքները, որի փորձարկումից հետո աշխատում է նրա վրա որպես հրամանատարի օգնական։ Այստեղ երիտասարդ ծովայինը ծանր փորձությունների, մտատանջումների բովով անցավ։ Ցարիզմի տապալումից հետո երկրում ծավալված անարխիզմի, անտարբերության լարված մթնոլորտում չինում էին պահեր, երբ Իսակովը մտածում էր հեռանալ ծովային ծառայությունից և տեղափոխվել Անդրկովկաս։ Սակայն երբ Պետերբուրգի վրա կախվեց գերմանական արշավանքի վտանգը, որն սպառնում էր ոչնչացնել Բալթյան նավատորմը, նա առանց տատանվելու ակտիվորեն մասնակցեց «Սառցային արշավին» և աչքի ընկավ որպես հմուտ կազմակերպիչ։ 1919 թ. կեսերին, վեցամսյա հատուկ դասընթացներն ավարտելուց հետո նա աշխատանքի է անցնում Կրոնշտադում որպես նավի հրամանատար։ Մեկ տարի անց տեղափոխվում է Վոլգա-կասպյան նավատորմը, և նավի հրամանատարի պաշտոնում մասնակցում Կասպից ծովում մղվող մարտական գործողություններին, մասնակցում ծովահենությամբ զբաղվող նավախմբերի ջախջախմանը և հասնում մինչև Էնզելի, կռվում անգլիական նավերի դեմ։ Կասպիական արշավանքներում փայլուն կերպով դրսևորվեցին նավապետ Իսակովի ռազմածովային ունակությունները։ Ահա թե ինչպես է նրան բնութագրում հրամանատարությունը. «Շատ կարդացած և զարգացած է ինչպես ռազմական տեսակետից, այնպես էլ ընդհանրապես։ Իրադրության մեջ արագորեն կողմնորոշվում է։ Անփոխարինելի է առանձին հարվածային կամ կարևոր առաջադրանքների կատարման գործում»[1]։

Կասպիական արշավանքից հետո, երբ երկիրը փաստորեն թևակոխեց խաղաղ շինարարության շրջանը, Իսակովը կրկին տեղափոխվում է Բալթիական նավատորմ և նշանակվում իր կառուցած «Իզյասլավ» ականակրի հրամանատար։ Սակայն 1922 թ. նա ծանր հիվանդանում է և բժշկական հանձնաժողովի հանձնարարությամբ փոխադրվում Սևծովյան նավատորմ։ Այստեղ նույնպես տեղի ժամանակում նա մեծ հեղինակություն է ձեռք բերում ծովայինների շրջանում։

1925 թ. Իսակովը նշանակվում է սևծովյան նավատորմի առափնյա պաշտպանության շտաբի պետ։

1928—1929 թթ. Իսակովը սովորում է ԽՍՀՄ ռազմածովային ակադեմիային առընթեր Պետերբուրգի բարձրագույն ակադեմիական դասընթացներում, որն ավարտելուց հետո նշանակվում է կարմիր բանակի շտաբի ծովային բաժնի պետ։ Մի քանի տարի աշխատելուց հետո նա ցանկություն է հայտնում անցնել գիտամանկավարժական աշխատանքի և իրականացնել իր մտահղացումները ռազմածովային գիտության տեսության հարցերում։ 1932 թ. նրան տեղափոխում են ԽՍՀՄ ռազմածովային ակադեմիա, որպես ստրատեգիայի և օպերատիվ արվեստի ամբիոնի վարիչ։ Այստեղ նա մեծ աշխատանք է կատարում դասագրքերի, ծրագրերի ստեղծման, ամբիոնը համապատասխան մասնագետներով ապահովելու գործում։ 1937 թ. Իսակովը նշանակվում է Բալթիական նավատորմի հրամանատար։ Նա գործուն մասնակցություն ունեցավ հյուսիսային նավատորմի կազմակերպման, բարձրորակ կադրեր պատրաստելու աշխատանքին։ Մեկ տարի անց, 1938 թ. նա

1 Տե՛ս ՀՀ նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ, Իսակովի անձնական արխիվ։

առաջ քաշվեց և նշանակվեց ԽՍՀՄ ռազմածովային ժողկոմի տեղակալ և Պետերբուրգի ռազմածովային ակադեմիայի պետ։

Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին Իսակովը վարում էր նաև ԽՍՀՄ ծովային գլխավոր շտաբի պետի պաշտոնը։ 1941 թ. հուլիսին, երբ ծանր վիճակ էր ստեղծվել Մերձբալթիկայի զորքերի և նավատորմի համար, նա նշանակվում է Հյուսիս-արևելյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի տեղակալ և ռազմական խորհրդի անդամ։ Անգնահատելի է նրա ծառայությունը Լենինգրադի հերոսական պաշտպանության գործում, երբ նավատորմը ոչ միայն դիմացավ հակառակորդի բոլոր գրոհներին, այլև ճեղքելով դուրս եկավ շրջափակումից։ Նա հմտորեն կոորդինացրեց կարմրադրոշ Բալթյան նավատորմի ուժերը ցամաքային զորքերի գործողությունների հետ, դրսևորելով արտակարգ ունակություններ և կազմակերպչական ձիրք։ Լենինգրադի լեգենդար պաշտպանները մոտիկից ճանաչում ու մեծ հարգանք էին տածում Իսակովի նկատմամբ։

Երբ պատերազմական դրությունը ծանրացավ կովկասյան ճակատում և թշնամին փորձում էր գրավել Կովկասը և Անդրկովկասը, ոչնչացնել Սևծովյան նավատորմը, 1942 թ. մայիսին Իսակովը նշանակվեց Անդրկովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի տեղակալ և ռազմական խորհրդի անդամ։

Սևծովյան ափերի պաշտպանության համար շատ մեծ էր ռազմածովային նավատորմի դերը՝ թշնամու գործողությունները ձախողելու, վճռական հատվածներին հարվածներ հասցնելու և ցամաքային զորքերի պաշտպանողական մարտերին օժանդակելու գործում։ Իսակովը ջանքեր չխնայեց ցամաքային զորքերի և Սևծովյան նավատորմի գործողությունները կոորդինացնելու, Սևաստոպոլի հերոսական պաշտպանությունը կազմակերպելու հարցում։ Նրա ակտիվ աշխատանքի շնորհիվ էր, որ հաջողվեց Սև ծովի և Ազովի նավատորմներն առանց կորուստների փոխադրել Սուխումի և Բաթումի նավահանգիստները։ Միաժամանակ կարգավորվեցին Սև և Կասպից ծովերի ջրային ուղիները, որոնք մեծ դեր էին խաղում Հարավային և Անդրկովկասյան ռազմաճակատները զինամթերքով ու պարենով ապահովելու գործում։ 1942 թ. Սևծովյան նավատորմը, համագործակցելով ցամաքային և օդային ուժերի հետ, կասեցրեց հակառակորդի առաջխաղացումը դեպի հարավ։ Այստեղ, մարտական գործողությունները ղեկավարելու ժամանակ, 1942 թ. հոկտեմբերին Իսակովը ծանր վիրավորվեց և բժիշկների հսկողության տակ փոխադրվեց Թբիլիսի, Սիրության լավագույն բժիշկների ջանքերով, ծանր վիրահատման գնով, Իսակովի կյանքը փրկվեց։ Այդ օրերին նա հազարավոր հեռագրեր ու նամակներ էր ստանում ինչպես հրամանատարության կողմից, այնպես էլ աշխատավորական կոլեկտիվներից։ Ծանր փորձությունների բովով անցած ծովակալը դիմացավ և հաղթեց... Դեռևս լիովին չապաքինված, 1943 թ. գարնանը նա փոխադրվում է Մոսկվա և նշանակվում ԽՍՀՄ ռազմածովային ժողկոմի առաջին տեղակալ։ 1944 թ. մայիսին նրան շնորհվում է նավատորմի ծովակալի կոչում։

Հետպատերազմյան շրջանում ծովակալ Իսակովը պատասխանատու և բեղմնավոր աշխատանքներ է կատարում ԽՍՀՄ ռազմածովային ուժերի ժողկոմատում և «Ծովային ատլասի» խմբագրությունում։ Այժմ նա ավելի շատ զբաղվում է ռազմածովային արվեստի և տեսության մշակման հարցերով։ 1946 թ. նրան շնորհվեց ռազմածովային գիտությունների դոկտորի աստիճան, ապա նաև պրոֆեսորի կոչում։ Սակայն ծանր վիրահատությունն իրեն զգացնել էր տալիս և տարեցտարի վատանում էր նրա առողջական վիճակը։ 1956 թ. Իսակովը հարկադրված հրաժարվեց բոլոր զբաղեցրած պաշտոններից։ 1965 թ., Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 20-ամյակի առթիվ նրան շնորհվեց Խորհրդային Միության Հերոսի կոչում։

Ծովակալ Իսակովը միշտ հետաքրքրվել է Հայաստանով, հայ ժողովրդի ճակատագրով, պատերազմի տարիներին հայոց զավակների գործած սքան-

ոանքներով։ 1953 թ. նա եղավ Հայաստանում, եղավ հանրապետության տեսարժան վայրերում, ոգևորվեց նրա ձեռք բերած տնտեսական ու մշակութային նվաճումներով։ Հանդիպումներից մեկի ժամանակ հայ մեծանուն գրող Ավետիք Իսահակյանը, դիմելով ծովակալին, ասաց. «Մենք միշտ հպարտացել ենք ռուս զորավարներով և կրկնակի ուրախ ենք, երբ այդ դյուցազունների շարքում տեսնում ենք նաև Ձեզ՝ հայ ժողովրդի զավակ ծովակալ Իսակովին»[2]։ Նա երազում էր նորից գալ Հայաստան, սակայն ծանր հիվանդությունը թույլ չտվեց իրագործել այդ ծրագիրը։ Ծովակալ Իսակովը վախճանվեց 1967 թ. հոկտեմբերի 2-ին, Մոսկվայում, երկարատև և ծանր հիվանդությունից հետո։

Ռազմածովային ծառայության հմուտ կազմակերպիչ լինելուց բացի, Իսակովը նաև ռազմական գիտության խոհուն տեսաբան և մեծ գիտակ էր։ Նրա գրչին են պատկանում 100-ից ավելի աշխատություններ, որոնց մի մասը հրատարակվել է մի քանի անգամ և թարգմանվել օտար լեզուներով։ Դեռևս 1928 թ. լույս է տեսնում նրա «Գիշերային ականազերծում» աշխատությունը, ուր ընդհանրացված էր դարասկզբի ռուս-ճապոնական և առաջին համաշխարհային պատերազմի փորձը։ Այն կարևոր հետազոտություն էր ռազմածովային արվեստի բնագավառում և բարձր գնահատվեց մասնագետների կողմից։ 1932—33 թթ. նա մասնակցեց առաջին համաշխարհային պատերազմի պատմության փաստաթղթերի ժողովածուներ կազմելու և խմբագրելու աշխատանքներին։ 1933 թ. Պետերբուրգում լույս տեսան Ա. Ալեքսանդրովի, Ի. Իսակովի և Վ. Աբելինի «Սուզանավերի ռազմական գործողությունները» մեծածավալ աշխատության երկու հատորները, որոնք մինչև այժմ չեն կորցրել իրենց գիտական արժեքը։ Այդ աշխատության տեսական ընդհանրացումները նպաստեցին ԽՍՀՄ սուզանավաշինության զարգացմանը։ 1936 թ. Իսակովի հրատարակած «Ճապոնացիների գործողությունները ընդդեմ Ցինդաոյի, 1914 թ.» ուսումնասիրությունը համարվում է ռազմածովային արվեստի պատմության կարևոր նվաճումներից մեկը։ Նույն թվականին այն պաշտպանվեց որպես թեկնածուական դիսերտացիա։

Լինելով ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի խոշոր տեսաբան ու պրակտիկ գործիչ, Իսակովը բեղուն գիտական գործունեություն ծավալեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին։ Դեռևս պատերազմը չավարտված, նա նյութեր էր հավաքում և կազմակերպում նրա պատմության ուսումնասիրությունը։ Նրա «ԽՍՀՄ ռազմածովային նավատորմը Հայրենական պատերազմում» ծավալուն աշխատությունը առաջինն էր այդ բնագավառում և անմիջապես թարգմանվեց մի քանի լեզուներով։ Այն մինչև այժմ օգտագործվում է ռազմածովային ակադեմիաներում որպես դասագիրք։ Ռազմածովային նավատորմի երիտասարդ կադրերի սեղանի գրքեր են նաև Իսակովի մասնակցությամբ և խմբագրությամբ լույս տեսած «Ռազմածովային նավատորմի հրամանատարի տեղեկատու», «Ուղեցույց ծովային ռազմական գործողությունների համար», «ԽՍՀՄ ռազմածովային ուժերի մարտական Կանոնադրությունը» և այլն։

Պատերազմից հետո, 1947 թ. լույս տեսավ Իսակովի «Մերձծովյան ամրոցները» ծանրակշիռ աշխատությունը, որն անմիջապես արժանացավ մասնագետների ուշադրությանը։ Դա յուրատեսակ փոքրիկ հանրագիտարան էր, որտեղ պատմական և ռազմական նշանակություն ունեցող բազմաֆարուստ նյութեր են ուսումնասիրվել և լուրջ ու արժեքավոր եզրակացություններ արվել։ Այսպես, նա գտնում է, որ անհրաժեշտ է Գլխավոր շտաբում ստեղծել ռազմածովային գիտական վարչություն, որը պետք է գլխավորի գիտահետազոտական աշխատանքները և ուժեր մոբիլիզացնի ռազմածովային նավատորմի մասին բարձրարժեք ուսումնասիրություններ ստեղծելու համար։

---

2 Տե՛ս Ա. Մալխասյան. Սովետական բանակի հայ գործիչները. Երևան, էջ 265։

Հայրենական պատերազմի վերաբերյալ Իսակովի ուսումնասիրությունների շարքում մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունի նրա «Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում» աշխատությունը, որը ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսավ 1946 թ.։ Դա փաստորեն պատերազմին մասնակցած հայ ծովայիններին նվիրված առաջին գրքույկն էր, որտեղ ջերմ սիրով ու հպարտությամբ է խոսվում նրանց մասին։ Ահա թե ինչ է գրում նա Նելսոն Ստեփանյանի մասին. «Չեմ կարող մոռանալ իմ հայրենակցին, որը պայծառորեն մարմնավորում էր ժողովուրդների եղբայրական միասնությունը։ Ոչնչացնելով ֆաշիստներին, այդ խիզախ երևանցին պայքարում էր հանուն բոլոր ժողովուրդների երջանկության, հանուն Հայաստանի»[3]։

Ծովակալ Իսակովի տաղանդն ու գիտակազմակերպչական ընդունակությունները վառ դրսևորվեցին հատկապես ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի օվկիանոսագիտության հանձնաժողովում աշխատելու տարիներին։ Անգնահատելի է նրա ներդրումը ծովերի ու օվկիանոսների ուսումնասիրման, նրանց պաշարների արդյունավետ օգտագործման հարցերի մշակման մեջ։ Այս բնագավառում նրա թողած գիտահետազոտական ժառանգության մեջ առանձնանում է նրա «Ծովային ատլաս» բազմահատոր ուսումնասիրությունը, որի պատրաստումն ու հրապարակումը նրան համաշխարհային ճանաչում բերեց։ Դեռևս 1941 թ. այդ նպատակով ստեղծվել էր հատուկ խմբագրական կոլեգիա Իսակովի գլխավորությամբ։ 1950-ական թթ. լույս տեսած «Ծովային ատլասի» հատորները խոշոր ներդրում էին համաշխարհային ծովագնացության և պատմաաշխարհագրական գիտությունների բնագավառում։ Այն շատ բարձր գնահատվեց տարբեր երկրների խոշոր մասնագետների կողմից։ Այդ աշխատության համար Ի. Իսակովն արժանացավ ԽՍՀՄ Պետական առաջին կարգի մրցանակի։

Լայն ու բազմաբնույթ են ծովակալ Իսակովի հետաքրքրության շրջանակները։ Նա աշխարհագրագետ էր, օվկիանոսագետ, քարտեզագետ, նավատորմի պատմության հմուտ գիտակ և խոշոր քաղաքագետ։ Նա ճիշտ էր գնահատում պատմության մեջ տարբեր ժողովուրդների խաղացած դերի և պատմական միսիայի հարցերը։ Խոսելով 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասին, նա իրավացիորեն նշում էր, որ ով մասնակցել է Կովկասից թուրքերին դուրս մղելու պայքարին, նա «արժանի է շնորհակալության ինչպես ռուսների, այնպես էլ տեղական այն բնակիչների ու նրանց հետևորդների կողմից, որոնք մնացել են իրենց հայրենի հողի վրա»[4]։ Մեծ գիտնականն ու քաղաքացին չէր կարող սխալվել հայերի պատմական ճակատագրի և կողմնորոշման հարցերում։

Հաշվի առնելով ծովակալ Իսակովի գիտական վաստակը, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիան մի խումբ նշանավոր ակադեմիկոսների առաջադրմամբ 1958 թ. նրան ընտրում է թղթակից անդամ։ Նույն թվականին Մեքսիկայի ռազմական հետազոտությունների ակադեմիան նրան ընտրում է պատվավոր անդամ, իսկ 1967 թ. մարտին ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը Իսակովին ընտրում է Հայաստանի ակադեմիայի պատվավոր անդամ։

Պատմ. գիտ դոկտոր Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ

---

3 Ի. Իսակով. Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում, էջ 24։

4 Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ, Ծովակալ Իսակովի անձնական արխիվ։